ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ ՀՈՒՅՆԵՐԻ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ (1913–1923 թթ.)

ԳԵՎՈՐԳ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայոց ցեղասպանության պատմագրության մեջ առկա են աշխատություններ՝ նվիրված հայերի և այլ ժողովուրդների ցեղասպանությունների համեմատությանը: Այդ առումով զգալի աշխատանք է կատարվել Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի համեմատական ուսումնասիրության բնագավառում[1]: Սակայն գիտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաև հայերի և Օսմանյան կայսրությունում զանգվածային տեղահանությունների ու կոտորածների ենթարկված այլ ժողովուրդների՝ տվյալ դեպքում հույների ոչնչացման զուգահեռումը[2]: Նման մոտեցման առանձնահատկությունն այն է, որ միևնույն պետության ազգային քաղաքականությունը դիտարկվում է հպատակ երկու ժողովուրդների օրինակով:

Հույների և հայերի տեղահանություններն ու կոտորածները համեմատելիս աչքի է զարնում այն իրողությունը, որ մասնագիտական գրականության մեջ հայերի դեպքում ապացուցված է «կանխամտածվածության» կամ «դիտավորության» հանգամանքը, այսինքն՝ թուրքական իշխանությունների նպատակը եղել է կոնկրետ տեսակի ոչնչացումը, այլ կերպ ասած՝ ապացուցվել է ցեղասպանության՝ հստակ մշակված ծրագրի գոյության փաստը[3]: Հարց է առաջանում. այդ դեպքում ինչպե՞ս բացատրել հույների զանգվածային տեղահանությունների և կոտորածների փաստը: Քրիստոնյա մյուս ժողովուրդների՝ տվյալ դեպքում հույների և ասորիների կոտորածների ուսումնասիրությամբ զբաղվող մի շարք մասնագետներ հակված են ընդունելու նրանց ոչնչացնելու դիտավորության փաստի առկայությունը: Ըստ Ֆլորիդայի Միջազգային համալսարանի Իրավունքի դպրոցի պրոֆեսոր Հ. Թրեյվիսի՝ «Կայսրության քրիստոնյաների բնաջնջման՝ կառավարության դիտավորության բացակայությու-

---

[1] *Մանրամասն տե՛ս Տ. Մ ա թ ո ս յ ա ն. Հայոց ցեղասպանություն և հրեական Հոլոքոստ. համեմատման փորձ, Երևան, 2005, էջ 4–12, Հ. Մ ա ր ո ւ թ յ ա ն. Հայոց ցեղասպանության և հրեաների Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկությունները.– ՊԲՀ, 2011, -2, էջ 24–46:*

[2] *Մի շարք աշխատություններում կան դրվագներ, որոնք նվիրված են այս հարցի դիտարկմանը. տե՛ս, օրինակ,* R. P. A d a l i a n. Comparative Policy and Differential Practice in the Treatment of Minorities in Wartime: the United States Archival Evidence on the Armenians and Greeks in the Ottoman Empire.– Journal of Genocide Research, 2001, 3, pp. 31–48; *Գ. Քիլիմջյան. Թուրք – հունական հարաբերությունները 1908–1914 թվականներին, Երևան, 1988, էջ 158:*

[3] *Տե՛ս Ռ. Մ ա ֆ ր ա ս տ յ ա ն. Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876–1920), Երևան, 2009, էջ 167–189:*

նը գրեթե անհնար է դարձնում բացատրել Առաջին աշխարհամարտի ժամանակ Օսմանյան կայսրությունում ապրող հայ, ասորի և հույն քրիստոնյաների կոտորածները, բռնաբարությունները, բռնի տեղահանությունները, սեփականությունից զրկելը, որոնք տեղի են ունեցել այդպիսի մեծ ծավալներով»[4]: Իսկապես, չնայած հատուկ ձևակերպված փաստաթղթի բացակայությանը կամ անհայտ լինելուն, ճիշտ չէ բացառել դիտավորության փաստի գոյությունը, քանի որ դժվար է այլ կերպ բացատրել հարյուր հազարավոր հույների ոչնչացումը: Եվ դա այն դեպքում, երբ կոտորածների իրագործման մեջ ներգրավված էին թուրքական իշխանությունների ներկայացուցիչները:

Հայտնի է, որ Հայոց ցեղասպանության նախապատրաստման գործում կարևոր նշանակություն են ունեցել «»Միություն և առաջադիմություն» կուսակցության երրորդ (1910 թ.) և չորրորդ (1911 թ.) համագումարները: Դրանք նշանավորվեցին կուսակցության ներսում հակահայկական որոշումների ընդունմամբ: Համագումարների՝ անուղղակի մեզ հասած որոշումները, սակայն, առնչվում են նաև հույներին[5]: Ստացվում է, որ առաջին փուլում, այսինքն՝ կուսակցության ներսում որոշումների ընդունման ժամանակ երկու ժողովուրդների ճակատագրի վերաբերյալ նպատակը (բռնի օսմանացում – թուրքացում) կրել է ընդհանուր բնույթ: Այդ դեպքում որոշակի շփոթմունք է առաջանում 1913–1914 թթ. Էգեյան ծովափի բնակավայրերից բազմահազար հույների արտաքսումների հետ կապված: Արդյոք դրանք և մեկ տարի անց սկսված Մեծ եղեռնն առանձին ծրագրերի արդյո՞ւնք են, թե՞ ոչ: Այս հարցում կան տարբեր տեսակետներ: Այսպես, ամերիկահայ հետազոտող Ռ. Ադալյանը երկու ողբերգությունների համեմատությանը նվիրված իր հոդվածում հանգում է այն եզրակացության, որ դրանք առանձին երևույթներ են, քանի որ հույներին տեղահանել են, իսկ հայերին՝ կոտորել[6]: Այո՛, 1913–1914 թթ. դեպքերն ավելի շուտ զանգվածային բռնի տեղահանություններ են. կոտորածներ եղել են առանձին տեղերում և համեմատաբար փոքր չափերով՝ ի տարբերություն Հայոց ցեղասպանության: Սակայն Ռ. Ադալյանը շեշտը դրել է ողբերգական իրադարձությունների ընթացքի համեմատական վերլուծության վրա: Այնուամենայնիվ, պետք է նշել, որ նրան նման եզրակացության է բերել այն հանգամանքը, որ նա հիմնահարցը չի դիտարկում ավելի լայն՝ 1913–1923 թթ. ձևաչափով:

Հույների տեղահանությունների գլխավոր նպատակը թուրքացման քաղաքականությունն էր, նշված շրջանները քրիստոնյա բնակչությունից □ազատելու□ ձգտումը, տարածքների պահպանումը և ազգային հարցի լուծման սեփական տարբերակի իրագործումը: Հենց նպատակների ու պատճառների դիտարկումն է, որ մեզ հնարավորություն է տալիս գտնելու այս երկու երևույթների կապը: Նույն նպատակը երիտթուրքերը հետապնդել են նաև հայերի դեպքում: Այսինքն՝ հակահունական քաղաքականությունը հակահայկականի

---

[4] H. T r a v i s. Native Christians Massacred: The Ottoman Genocide of the Assyrians during World War I. – Genocide Studies and Prevention, Vol. 1, № 3, 2006, p. 342.

[5] А. А в а к я н. Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений. Ереван, 1999, с. 15–18.

[6] R. P. A d a l i a n. *Նշվ. աշխ., էջ 31–48:*

հետ միավորվում է միևնույն՝ բնակչության թուրքացման քաղաքականությամբ: Իսկ միջոցների տարբերությունն ունի արդեն այլ պատճառ՝ Հունաստանի դերը: Այո՛, հունական պետության գոյությունը, ինչպես նաև այնտեղ մահմեդական (թուրքական) բնակչության առկայությունը որոշակիորեն կաշկանդում էին երիտթուրքերի՝ լայնածավալ կոտորածներով հունական հարցը լուծելու նպատակի իրագործմանը:

Հունաստանի՝ որպես հույն ժողովրդի պետության, առկայությամբ է պայմանավորված հույների և հայերի դեմ կիրառված քաղաքականության մեջ առկա տարբերությունների մեծ մասը[7]: Սակայն այս հանգամանքն էականորեն ազդեց միայն գործադրված միջոցների, այլ ոչ թե որոշումների վրա: Հետևանքը բազմահազար հույների բռնի տեղահանությունն էր: Այս առումով կարևոր է հույն պատմաբան Ի. Խասիոտիսի դիտարկումը. «Տարօրինակ է, որ և՛ հույն, և՛ հայ պատմաբանները 1913–1914 թթ. հույների հալածանքները և 1915 թ. Հայոց ցեղասպանությունը համարել են առանձին երևույթներ»[8]: Համաձայնվելով հույն հեղինակի հետ՝ անհրաժեշտ է հավելել, որ դրանք պետք չէ դիտարկել առանձին և անջատ երևույթներ՝ հետևյալ պատճառներով.

ա) բոլոր տարբերությունները հիմնականում կապված են իրադարձությունների ընթացքի և գործադրված միջոցների հետ, այսինքն՝ 1913–1914 թթ., չնայած կոտորածների առանձին դեպքերին, հակահունական քաղաքականության գլխավոր ձևը եղել է բռնի տեղահանությունը: Այն ուղեկցվել է հույների նկատմամբ սպառնալիքներով, մահմեդականացմամբ, չենթարկվողներին հաճախ սպանել են և այլն: Այնուամենայնիվ, գլխավոր նպատակն իրագործվել է՝ Արևելյան Թրակիան և Փոքր Ասիայի արևմտյան ափերը հիմնականում «մաքրվել» են հույն բնակչությունից: Այսինքն՝ հույների դեպքում իրագործվել է թուրքացման հետևողական քաղաքականություն:

բ) Երկու երևույթների կապը բացահայտող մյուս պատճառը դրանց շարունակականությունն է: Այն դրսևորվում է հատկապես հանցագործ որոշ ղեկավարների ակտիվ ներգրավվածությամբ ինչպես հույների տեղահանության, այնպես էլ Հայոց ցեղասպանության գործում: Այսպես, օրինակ, դոկտոր Ռեշիդը, ծառայելով Կարեսիում որպես կայմակամ, այնտեղ կազմակերպել է հույների բռնագաղթ, որի հրամանը տրվել էր Թալեաթի կողմից[9]: Այդ նույն անձը հետագայում, երբ Դիարբեքիրի նահանգապետն էր, հանդես է գալիս որպես հայերի և ասորիների կոտորածի կազմակերպիչ[10]: Կան այդպիսի այլ օրինակներ ևս[11]:

---

[7] *Հունական պետության □զսպող□ դերի մասին տե՛ս* H. M o r g e n t h a u. Ambassador Morgenthau's Story. Garden City – New York, 1918, pp. 325–326.

[8] I. H a s s i o t i s. The Armenian Genocide and the Greeks: Response and Records (1915–1923).– The Armenian Genocide: History, Politics, Ethics, New York, 1992, p. 135.

[9] D. G a u n t. Massacres, Resistance, Protectors: Muslim – Christian Relations in Eastern Anatolia during World War I, Piscataway – New Jersey, 2006, pp. 66, 156.

[10] *Նույն տեղում:*

[11] *Պերթև փաշան Էգեյան ծովի ավազանում հույների տեղահանության կազմակերպիչներից մեկն էր, հետագայում արդեն նրան տեսնում ենք Սեբաստիայի հայերի նկատմամբ հաշվեհարդար կատարելիս (տե՛ս* V. N. D a d r i a n. Ottoman Archives and Denial of the Armenian Genocide. – The Armenian Genocide: History, Politics, Ethics, p. 309*):*

գ) Էական նշանակություն ունի մի կարևոր գործոն ևս, որն անտեսվել է շատ հետազոտողների կողմից: 1913–1914 թթ. հույների տեղահանությունը 1913–1923 թթ. տարվող հակահունական քաղաքականության մի մասն էր: 1913–1914 թթ. հույների բռնագաղթի որպես առանձին երևույթի դիտարկումը գլխավորապես կապված է եղել այդ շրջանում հույն-թուրքական հարաբերությունների և Բալկանյան պատերազմների հետ: Սակայն առավել ճիշտ կլինի այդ տարիների բռնագաղթը դիտարկել 1913–1923 թթ. իրադարձությունների համատեքստում: Ակնհայտ է, որ Առաջին աշխարհամարտի և դրան հաջորդած հույն-թուրքական պատերազմի ժամանակահատվածում հակահունական քաղաքականությունը միայն բռնի տեղահանություններով կամ մասնակի ջարդերով չէր սահմանափակվում: Եթե 1913–1914 թթ. հույների դեմ բռնությունները դրսևորվում էին լայնածավալ տեղահանությունների տեսքով, ապա հետագա տարիներին դրանց գումարվեցին նաև կոտորածները: Սակայն ասվածը թույլ չի տալիս պնդել, որ 1916–1922 թթ. Պոնտոսի կամ 1922 թ. Զմյուռնիայի դեպքերն առանձին երևույթներ են: Հակահունական քաղաքականությունն Օսմանյան կայսրությունում 1913–1914 թթ. և 1916–1923 թթ. ունեցել է որոշակի տարբերություններ, այսինքն՝ անցել է փուլային զարգացում: Եթե այդ քաղաքականությունը համեմատում ենք Հայոց ցեղասպանության հետ, ապա պետք է հաշվի առնենք դրա ժամանակագրական առանձնահատկությունները:

դ) 1913–1914 թթ. հույների բռնագաղթը որոշակիորեն նախադեպ է դարձել Հայոց ցեղասպանության համար: Այլ կերպ ասած՝ իրագործված հանցագործության համար պատժի բացակայությունն է, որ կապող օղակ է երկու ողբերգությունների միջև: Այն հանգամանքի գիտակցումը, որ եթե հունական պետության աչքի առաջ կարելի էր բռնի տեղահանել հույներին և մնալ անպատիժ, երիտթուրքերին բերեց այն համոզմանը, որ հնարավոր էր նույնն անել հայերի հետ ավելի դաժան միջոցներով: Հենց այս իրողությունը հաշվի առնելով (Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին նախորդող և հաջորդող երեք-չորս ամիսներին հույների բռնագաղթի նկատմամբ միջազգային հանրության անտարբեր վերաբերմունքը)՝ դեպքերի ժամանակակից ամերիկյան դեսպան Հ. Մորգենթաուն նշում է, որ «դրա պատճառով է, որ թուրքերը որոշեցին նույն մեթոդը լայն չափով կիրառել ոչ միայն հույների, այլ նաև հայերի, սիրիացիների, նեստորականների և իրենց հպատակ ուրիշ ժողովուրդների նկատմամբ»[12]:

Նշված պատճառների դիտարկումը հնարավորություն է տալիս հանգելու այն եզրակացության, որ ընդամենը մեկ տարվա տարբերությամբ իրականացված երկու «գործողությունները» չեն կարող կապ չունենալ միմյանց հետ, մանավանդ եթե դրանք իրագործվում են միևնույն պետության, վարչակարգի և գործող անձանց մասնակցությամբ:

Մեծ կարևորություն է ներկայացնում նաև Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին հույների տեղահանությունների և կոտորածների ծրագրային կողմը: Որոշ աղբյուրներում տեղեկություններ են պահպանվել, որ

---

[12] H. M o r g e n t h a u. *Նշվ. աշխ., էջ 323–324:*

հայերի տեղահանությունից հետո հաջորդը լինելու է հույներինը: Մասնավորապես, ըստ Յ. Լեփսիուսի, «Միություն և առաջադիմություն» կուսակցության կոմիտեի անդամները հաճախ են հրապարակայնորեն հայտարարել, որ «օտարականները պետք է աներևույթ ըլլան Թուրքիայեն, նախ Հայերը, հետո Հույները, հետո Հրեաները և ամենեն վերջը Եվրոպացիները»[13]: Հպատակ ժողովուրդների ոչնչացման «շարունակական մոտեցման» առկայությունը և դրա կենսագործումը շատ լավ է երևում Պոնտոսի օրինակով, որտեղ հույների տեղահանություններն ու կոտորածները հաջորդեցին հայերի բնաջնջմանը: Դրա մասին է խոսում նաև երիտթուրքերի կենտրոնական կոմիտեից Ադանայի վիլայեթում կուսակցության պատասխանատու ներկայացուցչին ուղղված երկրորդ նամակը՝ թվագրված 1915 թ. մարտի 25-ով: Ըստ Անտոնյանի՝ դա կրկնությունն է առաջին՝ փետրվարի 18-ի նամակի, սակայն լրացումով, որ հայերից հետո երիտթուրքերը պետք է զբաղվեին հպատակ մյուս ժողովուրդների՝ հույների, սիրիացիների և արաբների բնաջնջմամբ[14]:

Այնուամենայնիվ, հույների և հայերի տեղահանությունների ու կոտորածների նախապատրաստման և իրականացման ծրագրային կողմը որոշակի տարբերություններ ունի: Ակնհայտ է, որ հույների բռնագաղթն ու կոտորածներն ունեն փուլային զարգացում՝ կապված ժամանակագրության և աշխարհագրության հետ: Ուստի, դժվար է պնդել մեկ կոնկրետ ծրագրի առկայության մասին: Ծրագրման առումով որոշակիորեն զուգահեռվելով Հայոց ցեղասպանության հետ՝ միաժամանակ հակահունական քաղաքականությունն առ այժմ դժվար է բխեցնել մեկ կոնկրետ փաստաթղթից: Սակայն մի բան ակնհայտ է, որ 1913–1923 թթ. հույների տեղահանություններն ու կոտորածները (Արևելյան Թրակիա, Փոքր Ասիա, նաև Պոնտոս) կրել են պետական բնույթ և իրագործվել որոշակի համակարգվածությամբ:

Հույների և հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների իրագործած ցեղասպան քաղաքականությունը, կիրառված մեխանիզմների ու գործադրված միջոցների առումով, գրեթե նույնական է: Հույների նկատմամբ ևս - կիրառվեցին՝

– *տնտեսական պատժամիջոցներ,*

– *զորակոչ – աշխատանքային գումարտակների ստեղծում – երիտասարդության ոչնչացում,*

– *բռնի մահմեդականացում,*

– *զանգվածային տեղահանություններ ու կոտորածներ,*

– *մշակութային, կրթական և կրոնական հաստատությունների ոչնչացում[15]:*

---

[13] *Ե. Լ ե փ ս ի ո ւ ս. Գաղտնի տեղեկագիր. Հայաստանի ջարդերը (թարգմ. Մ. Շամտանճյան), Կ. Պոլիս, 1919, էջ 242–243:*

[14] *Ա. Ա ն տ ո ն յ ա ն. Մեծ ոճիրը: Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 134–137:*

[15] *Միայն Պոնտոսում թալանվեց և յուրացվեց 2 մլրդ ֆրանկի հարստություն, ոչնչացվեց 874 եկեղեցի ու վանք և 758 դպրոց (տե՛ս* G. B a l t a z z i. Les Atrocitiés Turques en Asie Mineure et dans le Pont, Athènes, 1922, p. 9*):*

Հաճախ նմանությունն այնքան մեծ է եղել, որ դրանք նույնացվել են և համարվել մեկ ոճիր կամ դրա տարբեր փուլեր: Այս առումով Հ. Մորգենթաուն նշում է, որ հայերը Թուրքիայի միակ հպատակ ժողովուրդը չէին, որ ենթարկվեցին հալածանքների՝ Թուրքիան միայն թուրքերի երկիր դարձնելու քաղաքականության հետևանքով, և հետո ավելացնում, որ հայերի մասին իր պատմությունը մի քանի փոփոխություններով կարող է պատմել նաև հույների և ասորիների մասին[16]:

Այնուամենայնիվ, հակահունական և հակահայկական քաղաքականության մեթոդներն ունեն որոշակի տարբերակիչ առանձնահատկություններ: Մասնավորապես, կա տարբերություն զոհերի՝ մարդկային կորուստների թվաքանակի հետ կապված: Հայ ժողովրդի մարդկային կորուստները գերազանցում են հույների կորուստները, սակայն դրանից հույն ժողովրդի ողբերգությունն ամենևին էլ չի փոքրանում:

Մյուս կարևոր տարբերակիչ առանձնահատկությունն այդ հրեշավոր քաղաքականության իրագործման մեջ մուսուլման տարրի օգտագործման փաստն է: Հայերի և հույների ոչնչացումն ունի մի հիմնարար տարբերություն. հայերի կոտորածների ժամանակ մեծապես օգտագործվել է քրդական տարրը, ինչը բացակայում է հույների պարագայում: Այս փաստի վրա ուշադրություն է դարձրել պատմաբան Ա. Ավագյանը, ում դիտարկմամբ՝ հույներով խիտ բնակեցված շրջաններում, չնայած մուսուլման գաղթականների առկայությանը, այնուամենայնիվ, չկար այնպիսի գործոն, ինչպիսին քրդերն էին[17]: Կայսրության արևմտյան հատվածում թուրքական իշխանություններն օգտագործել են տեղի մահմեդական տարրին, սակայն դա համեմատության ոչ մի եզր չունի Հայոց ցեղասպանության գործում քրդերի ունեցած դերակատարության հետ:

Կարևոր տարբերություններից մեկը հույների դեպքում «Ապրիլի 24-ի», այսինքն՝ մտավորականության նկատմամբ մեկ միասնական հաշվեհարդարի, ազգին գլխատելու օրվա բացակայությունն էր: Սակայն դա ամենևին չի նշանակում, որ հունական մտավորականությունը զերծ մնաց ձերբակալություններից և սպանություններից: Այսպես, 1915 թ. մարտի ութին մոտ երկու հարյուր հույն Կոստանդնուպոլսից ձերբակալվեց և արտաքսվեց Փոքր Ասիայի խորքերը: Նրանց մեջ կային զգալի թվով հույն մտավորականներ ու երևելիներ[18]: Էլ ավելի սարսափելի էին 1921 թ. աշնանը Պոնտոսում հունական մտավորական և քաղաքական վերնախավի ներկայացուցիչների մահապատիժները[19]: Ամենևին չբաղդատելով երկու ազգերի համար մտավորականների «կորստյան վշտի մեծությունը»՝ նշենք, որ հունական ողբերգության համատեքստում դա չունեցավ այն ազդեցությունը, ինչը կատարվեց արևմտահայության դեպքում: Այս առումով տեղին է նշել, որ հույների տեղահանությունը-

---

[16] H. M o r g e n t h a u. *Նշվ. աշխ., էջ 323:*

[17] А. А в а к я н. Черкесский фактор в Османской империи и Турции (вторая половина XIX – первая четверть XX вв.). Ереван, 2001, с. 243.

[18] *Տե՛ս* Les Persécutions antihélleniques en Turquie, depuis le début de la guerre europènne: D'après les rapports officiels des agents diplomatiques et consulaires, Paris, 1918, p. 36–37.

[19] Το Μαρτυριον του Ποντου. Αθήνα, 1922, σελ. 8–12.

ների և կոտորածների վերաբերյալ մեզ ծանոթ ուսումնասիրությունների մեջ հույն մտավորականության ոչնչացման խնդրի լուսաբանման վրա հատուկ շեշտ չի դրվում՝ ի տարբերություն Հայոց ցեղասպանությանը նվիրված պատմագիտական գրականության:

Հույների զանգվածային կոտորածների և Հայոց ցեղասպանության մյուս տարբերությունն արտաքսվածների ու կոտորվածների թվի հարաբերակցության մեջ է. հայերի պարագայում առավել մեծ թիվ են կազմում նահատակվածները: Բացի այդ, հույների պարագայում չկային համակենտրոնացման այնպիսի խոշոր կենտրոններ, ինչպիսիք են հայերի համար Դեր-Զորը և Ռաս-ուլ-Այնը: Ի դեպ, հույն ցեղասպանագետ Թ. Մալկիդիսը, վկայակոչելով Վիեննայի համալսարանի պրոֆեսոր Պ. Էնեպեկիդիին, համեմատում է Հույների ցեղասպանությունը հրեաների Հոլոքոստի հետ և, նշելով երկու երևույթների նմանությունները՝ միաժամանակ ընդգծում է, որ չնայած հույներին տեղահանում էին, սակայն նրանք հիմնականում մահանում էին ճանապարհին սովից, հոգնածությունից և հիվանդություններից: Հույների համար չկար վերջնական «կանգառ», գոյություն չուներ «հունական Աուշվիցից»: Դրա փոխարեն հույների տեղահանությունը նա համարում էր «Աուշվիցից ճանապարհին»[20]:

Խնդրո առարկա հարցում մի կարևոր տարբերություն ևս կա, որ նկատել են ժամանակակիցները: Համեմատելով հակահունական և հակահայկական քաղաքականության դրսևորումները՝ «Հունական նպաստամատույց կոմիտեի» հաղորդագրություններում նշվում էր, որ «կոտորածներն ավելի մեղմ էին՝ համեմատելով արտաքսման կտտանքների և սարսափների հետ: Հույները չեն կոտորվել նույն արագությամբ, ինչ որ հայերը, բայց նրանց քշել են այն շրջաններ, ուր նրանք սնունդ չէին կարող գտնել: Նրանց ճանապարհը ծածկվում էր դիակներով: Արտաքսումը, պարզվում է, ավելի արդյունավետ է, քան կոտորածը՝ ավերելու և կործանելու համար ...»[21]: Անշուշտ, համեմատությունն ունի սուբյեկտիվ կողմ, սակայն այստեղ կարևորն այն է, որ երևում է՝ հույների ոչնչացման մեխանիզմներում հատուկ տեղ է հատկացվել այնպիսի պայմանների ստեղծմանը, որը հանգեցնում է մահվան (սննդի և ջրի, ինչպես նաև համապատասխան կենսապայմանների ու բժշկական օգնության բացակայություն): Իհարկե, այս հանգամանքն առկա էր նաև հայերի ոչնչացման մեխանիզմներում, բայց ժամանակի հունական աղբյուրները հատուկ շեշտում են այս իրողությունը: Այսինքն՝ հույներին շատ դեպքերում ոչ թե կոտորել են, այլ մահվան դատապարտել՝ ծանր պայմաններ ստեղծելով նրանց համար, ինչը ՄԱԿ-ի 1948 թ. «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի համաձայն՝ նույնպես ցեղասպանության իրականացման միջոցների ցանկում է նշված[22]:

---

[20] Μαλκίδης Θ., Η Γενοκτονία των Ελλήνων. Θράκη, Μικρά Ασία, Πόντος, Λευκωσία, 2010, σελ. 197–198.

[21] N. Hlamides. The Greek Relief Committee: America's Response to the Greek Genocide. – Genocide Studies and Prevention, Vol. 3, № 3, 2008, p. 378.

[22] *Կոնվենցիայի ամբողջական տեքստը տե՛ս ՄԱԿ-ի պաշտոնական կայքէջում՝* http://www.un.org/ru/docume nts/decl_conv/conventions/genocide.shtml

Հարկ է ասել, որ հույների տեղահանությունների ու կոտորածների և Հայոց ցեղասպանության միջև, կան «սուբյեկտիվ» մի շարք տարբերություններ՝ կապված աշխարհագրական տեղանքի, իրագործողների նվիրվածության և այլ հանգամանքների հետ: Մասնավորապես, պետք չէ թերագնահատել աշխարհագրական տեղանքի դերը, քանի որ հույների բնակության ավանդական շրջաններն ավելի մոտ էին Եվրոպային, ինչը որոշակիորեն կաշկանդող դեր է կատարել թուրքերի համար:

Հույների և հայերի տեղահանությունների, կոտորածների ու ցեղասպանության կազմակերպիչների առումով կան ակնհայտ ընդհանրություններ: Իրագործողը Թուրքիան է՝ երիտթուրքական և քեմալական վարչակարգերի տեսքով ու դրանց գլուխ կանգնած գործիչներով:

Այսպիսով՝ 1913–1923 թթ. հույների և հայերի նկատմամբ թուրքական իշխանությունների կողմից իրականացված զանգվածային տեղահանությունների, կոտորածների ու ցեղասպանության դիտարկման և բաղդատման արդյունքում ակնհայտ են դառնում վերը նշված հիմնական նմանություններն ու տարբերությունները: Կրկնենք՝ նմանություններն են երկու ժողովուրդների թուրքահպատակ լինելը, մինչև Առաջին աշխարհամարտն իրավագուրկ վիճակը, նրանց թուրքացման քաղաքականությունը, հայերի և հույների տեղահանությունների ու կոտորածների մի շարք մեխանիզմները, ինչպես նաև երկու երևույթների շարունակականությունը: Հաճախ նմանությունները կարելի է դիտարկել որպես ընդհանրություն: Դրա գլխավոր ցուցիչը զոհերի համար □դահճի□, այլ կերպ ասած, ցեղասպան պետության (Թուրքիա) ընդհանրությունն է: Տարբերություններն են՝ Հունաստանի գործոնը, երկու երևույթների ծրագրային կողմը, հակահունական քաղաքականության փուլային զարգացումը և այլն: Տարբերություններ առկա են նաև իրագործման մեխանիզմներում, մասնավորապես, պետք է ընդգծել մտավորականության սպանության մեթոդները, հայ և հույն խաղաղ բնակչության ոչնչացման ձևերը, ինչպես նաև քրդական գործոնը:

ПАРАЛЛЕЛИ МЕЖДУ ДЕПОРТАЦИЯМИ И РЕЗНЕЙ ГРЕКОВ И ГЕНОЦИДОМ АРМЯН (1913–1923 гг.)

ГЕВОРГ ВАРДАНЯН

Резюме

В 1913–1923 гг. в Турции были организованы и проведены массовые депортации и резня греческого и армянского населения. С точки зрения исследования Геноцида армян важное значение имеет его сравнение с депортацией и резней греков. Это позволяет не только увидеть основные различия и сходства, но и помогает более глубоко понять национальную политику Османской империи.

PARALLELS BETWEEN THE DEPORTATIONS AND MASSACRES OF THE GREEKS AND THE ARMENIAN GENOCIDE (1913–1923)

GEVORG VARDANYAN

S u m m a r y

From 1913 to 1923 in Turkey were organized and carried out the mass deportations and massacres of the Armenian and Greek population. In term of the study of the Armenian Genocide it is important to compare it with the deportations and massacres of the Greeks. This allows us not only to see the main differences and similarities, but also helps better understand the national policy of the Ottoman Empire.